

լերան ստորոտը»: Քաղաքէն մէկ մղոն հեռու կը գըտնուին «Սամարացիներու բանակատեղիները» եւ անոնցմէ կէս մղոն վեր «Եղիսէ մարգարէին վանքը»: Սամարացիներու բանակատեղիները որ Թալմուտի մէջ կը կոչուին «Մինիմներու (հերետիկոսներ) բանակատեղիներ» կը համապատասխանեն Թէլ էս Սէմաքէն գէպի հարաւ երեք քմ. և էտ-Տէյրէն (վանք) երկու քմ. հեռու էս-Սամիր աւերեալ գիւղին, ուր տակաւին հեաքերը կը տեսնուին Եղիայի աղբիւրին մօտ: Ամէն պարագայի մէջ՝ Գ. դարու ուխտաւորին ստոյգ վկայութեան ոչ ոք կրնայ հակադրել տարտամ և անորոշ վկայութիւնը Isaac Chelohi որ հազար տարի յետոյ, Գալամոնը ցոյց կուտայ «Կեսարիոյ և Հայֆայի միջև»: Սուզարկուները հակառակ իրենց արագ հետազօտութեանց Գալամոնի ո՛ր և է յիշատակ չկրցին գտնել այս երկու քաղաքներուն միջև: Քիչնէր տեղակալը Թէլ էս Սէմաքի գետիններու շուրջ գտնուած վաւերագիրները պրպտելով համոզուած է թէ Գալամոնի անունը ո՛ր և է ձևով չէ կցուած երկրի ո՛ր եւ է մէկ կէտին:

Սաչակիրներու թուականի պատմիչները Հայֆան կը կոչեն Գայֆա կամ Հեֆֆա, կը կոչեն նաև իր մօտ զրացիին անունով Սիգալիսով, որ անհետացած էր: Թող թէ Տիւրացի կիյեօմ և Ժագ տը Վիթրի նոյն իսկ կը կոչեն զայն Porphyria Novissima, անունը քաղաքի մը զոր Բլէզանսի ուխտաւորը ցոյց տուած է Սիգամինոսի հարաւը:

Ըստ Պորտոյի ուխտաւորին, հին Պորփիրիոնը Փիւնիկէի մէջ քաղաք մըն էր Սիգոնի հիւսիսէն ութը մղոն հեռու: Բայց Թալմուտի ըսածին նայելով ծիրանի հայթայթող խեցեմորթի որտորդութիւնը կը տա-